ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: 2023 թվականին ընդունվել է ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառված է նաև Կառավարության 2021-2026 թթ-երի ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ-երի ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2025թ-ից, ընթացքում պետք է իրականացվեն հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթներում ներառվող առողջապահական ծառայությունների փաթեթների մշակում/վերանայում, ինչպես նաև դրանց չափորոշիչների կազմում:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ԱՀԱ ներդրմանը պատրաստ լինելու նպատակով, Առողջապահության նախարարությանն անհրաժեշտ է ապահովագրական փաթեթի կազմման համապատասխան մասնագետի ներգրավմամբ՝ սույն աշխատանքի նկարագրով նախատեսված գործողությունները սահմանված ժամկետներում իրականացնելու նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առողջության Համապարփակ Ապահովագրության ներդրմամբ պայմանավորված հիմնական ծառայությունների փաթեթը նկարագրող փաստաթղթերի մշակման ընթացքում կլինիկական տվյալների՝ ախտորոշումների, դրանց սահմանումների և ծառայությունների հետ նույնականացման խորհրդատվություն, այդ թվում

1. Ապահովագրական հիմնական ծառայությունների փաթեթում ներառված վերարտադրողական ծառայությունների բաշխում ըստ բժշկական օգնության տեսակների, ախտորոշման խմբերի:
2. Փաթեթի հաստատված կառուցվածքին համապատասխան ախտորոշումների՝ հիվանդությունների և վիճակների և դրանց դեպքում տրամադրվող ծառայությունների ցանկերի համադրում բաց աղբյուրներում առկա տեղեկատվության հետ, այդ թվում ԱՆ կողմից հաստատված գործելակարգերի, կլինիկական ուղեցույցների հետ:
3. Փաթեթում ներառվող ծառայությունների շրջանակներում կատարվող դեղերի, բժշկական նշանակության ապրանքների, լաբորատոր և գործիքային

հետազոտությունների, բժշկական խորհրդատվության և այլ բժշկական միջամտությունների հետ կապված ծախսերի, դրանց վիճակագրական ընդունելի նորմերի համադրում,

4. Խորհրդատվությունների, անհրաժեշտ հետազոտությունների ծավալների, վերարտադրողական տեխնոլոգիաների կիրառման տարբեր փուլերի միջև հաջորդականության սահմանում
5. Խորհրդատվությունների, հետազոտությունների, դեղերի կիրառման հաճախականությունների, դրանց համապատասխան ցուցանիշների սահմանումներ՝ համապատասխան ալգորիթմների տեսքով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փորձագետից ակնկալվում է ստանալ ամսեկան հաշվետվություններ աշխատանքի նկարագրով սահմանված գործառույթների իրականացման վերաբերյալ, ինչպես նաև հավաքագրված տեղեկատվության համադրումների, դրանց մեկնաբանությունների ամփոփ տեղեկատվության պարբերական փոխանցում Պետական առողջապահական գործակալությանը:

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագետը, ըստ անհրաժեշտության, Պետական առողջապահական գործակալության կողմից կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը նաև պետք է մասնակցի սույն աշխատանքի նկարագրով պայմանավորված պրեզենտացիա/ների կազմմանը, նկարագրելով առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները:

ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Առնվազն բարձրագույն բժշկական կրթություն, գիտական աստիճանը ցանկալի է:
- Ավելի քան 5 տարվա փորձ վերարտադրողական առողջության իրականացման բնագավառում,

- Առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ պետական կառավարման մարմինների հետ աշխատելու կամ բժշկական կազմակերպությունում աշխատելու փորձ,
- Տվյալների վերլուծություններ իրականացնելու հատուկ փորձ՝ համապատասխան ոլորտներում որոշումների կայացմանն աջակցելու համար
- Հայերենի, Ռուսերենի և Անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, մոտեցումները հիմնավորելու կարողություններ, հաշվետվությունների նախապատրաստման հմտություններ, ճնշման տակ և ըստ անհրաժեշտության ծանրաբեռնված աշխատելու ունակություններ: